


Quipperneukwe

12696

Outfit in the way



Emch
1900

Օսթրու Մակար

ՕՍԹՐՈՒ ԱԽ ՎԵՇԱՊՈ

(ՀԵՔԻՌԱԲ)

Ժայռ

(Արտադրության և ամսաթերթից)

ՊԵՐՏՈՐՈ ՎԵՇՐԵՎԱՆԵՐԸ

891.99
Հ-28

Ժ Պ Բ Զ Բ

Տպարան Ա. Մ. Մահմետ-Յակովլյանի

Տիպ-Լիտոգրաֆիա Ա. Մ. Մուգածյանով, Թ. Շահն.

1900

891.99

2-28

ԱԿԴ.

ՕՍԵՓՆ ՈՒ ՎԻՇԱՊԸ

(ՀԵՐԻԱՄ)

(Արտասուզած „ԱՂԲԻԻՐ“ ամսաթերթից)

1646

ՄԱՐՏԻՐՈՍ ԳԵԶՐԱՄԵՆԵՑՆ

203

Ճ Ո Ւ Ճ Ի

Տպարան Ա. Մ. Մահմետ-Յակոբեանցի

Տիպ-Լիտոգրաֆія А. М. Мугдусіанопова, въ Шушѣ.

1900

2903

Дозволено Цензурою 15 Сентября 1899 г. г. Тифлисъ



4867
41

Ապարաւոր տարիներ մեզանից առաջ ապրում էր մի մարդ: Նա երեք որդի ունէր: Նրա որդիները գեռ շատ փոքր էին երբ մեռաւ ինքը, ընտանիքի ամբողջ հոգսը իր կնոջ վրայ թողելով, որը իր սեփական աշխատանքով լաւ թէ վատ կարողանում էր իր երեխաներին պահել: Անգործ չէին նստում և երեխաները. նրանք իրանց մօր հետ գնում էին հնձած արտերը հասկ ժողովելու, տրորում էին հաւաքած հասկերը և ցորենը նրանից քամելով բաժանում, անտառից շալակով փայտ էին բերում և ալճն: Մի օր երեք եղբայրներն էլ միասին վերցրին իրանց թոկերը և գնացին անտառից փայտ բերելու: Ցուրտ, ձմեռային օր էր. ձիւնը քուլայ—քուլայ թափւում էր, քամին վզվզում և պտոյտներ անելով ձիւնը երեխաների երեսներով էր տալիս, իսկ նրանք

ոտաբորիկ, ցնցոտիների մէջ կորած, իւրաքանչիւրը եր կացինն ու պարանը ուսին, դրած, առաջ էին գնում: Քիչ ժամանակից յետոյ անտառ հասնելով, նրանք կտրատեցին փալտերը և շալակներ կազմեցին: Սկզբում, աշխատանքի ժամանակ նրանք չէին մըսում. բայց գործը վերջացնելուց յետոյ սկսեցին դողդողալ: Նորանք կամեցան մի չաղ կըակ անել և տաքանալ, բայց տեսան որ աբէթը և կայծառը տանն են թողել: Երեքից ամենափոքրը բարձրացաւ մի ծառ, որ տեսնի արդեօք ուրիշ տեղ կըակ չէ երեռում: Նա նկատեց, որ հեռու, շատ հեռու, անտառի խորքում մի ծուխ է բարձրանում: Նա իսկոյն լայտնեց եղբայրներին և ապա երեքով ճանապարհ ընկան այն կողմը, որտեղից բարձրանում էր ծուխը: Շուտով ցանկացած տեղը հասան: Ծուխը բաձրանում էր մի տան երթիկից. տունը մի ահագին շինութիւն էր, որի շուրջն ահագին ծառեր էին բսած: Նրանք ուղղակի դռ-

նով ներս չ'մտան, այլ բարձրացան տան կտուրը և երթիկով ներքեւ նայեցին որպես պէսզի տեսնեն ով է ապրում նրա մէջ: Բայց որքան զարմացան, երբ տեսան, որ մի ամեհի վիշապ նստել էր կըակի մօտե գլուխը կախ գցել: Կըակը այնքան չաղ էր որ երթիկից էլ կարելի էր տաքանալ: Այդպէս էլ արին: Նրանք զգուշութեամբ ձեռքները դէպի ներքեւ կախեցին տաքանալու. բայց յանկարծ նբանցից մէկի ոտը դուրս պլրծնելով ընկաւ և մի քար ուղղակի վիշապի գլխին գցեց: Վիշապը իսկոյն վեր թռաւ տեղից, դուրս պլրծաւ տանից, որ թշնամու մեծ պատառը ականչը թողնէ և կտուրը բարձրանալով տեսաւ նրանց, որոնք երկիւղից մնացել էին մեխւած: Վիշապը որովհետեւ մարդկանցից շատ էր վախենում, ուստի կամեցաւ նըրանց հետ գործը քաղցրութեամբ վերջացնել, կեղծաւոր լեզու բանեցնել, ուստի ասաց

— 0 —, բարով էք եկել, հազար բարով

էք եկելիմ աչքիս ու գլխիս վրայ տեղ
ունէք. համեցէք, համեցէք ներս եկէք,
գիտեմ որ բաւականին մըսած կ'լինիք, իսկ
իմ կրակը շատ չաղ է, համեցէք և տաքա-
ցէք: Ես շատ ժամանակ է մարդու երես
չէմ տեսել, ներս համեցէք տեսնենք ի՞նչ
կայ ի՞նչ չկալ, ախր այս որ խաչիցն է,
որ ինձ միտներդ էք բերել:

Նրանք, իհարկէ ոչ ճանաչում էին
վիշապին, ոչ տեսել էին նրան և ոչ էլ
միտներն էին բերել. ընդհակառակն նրան-
ցից իւրաքանչիւրը մտածում էր, որ,
ահա իրանց պատառ--պատառ կանէ,
բայց իրանք էլ զարմացան, որ վիշապը
ալնպէս է վարւում: Նրանք սկսեցին
մտածել և իրար ասել, որ գուցէ նա մարդ
է, որովհետև մարդի շատ նմտն էր, մի-
այն չափագանց վիթխարի կերպարանք
ունէր: Չգնալը վախկոտութեան նշան
համարելով, վճռեցին վիշապի հրաւէրն
ընդունել և ներս մտնել: Դոնով ներս
մտնելու ժամանակ բոլորից փոքրը, որի

անունը Օսէփ էր, ասաց.» Տղէրք; զգոյշ
կացէք և ինչ որ ես անեմ, գուք էլ այն-
պէս արէք և ինչ որ ասեմ՝ գուք հաս-
տատեցէք իմ խօսքերը»: Նրանք մօտե-
ցան կրակին. ի՞նչ կրակ, մի ահազին
խարոյկ էր. չորս—հինգ ահազին գէրան
գլուխ գլխի տւած վառւում էին. նրանց
երկարութիւնը մի քանի արշինի էր հաս-
նում. մի մասը ալրւում էր, իսկ միւս
մասը նստարանի տեղ էր ծառայում,
այնպէս որ երեք եղբայրներն էլ, նստեցին
գերանների վրայ և մի լաւ տաքացան:
Այնուհետև վիշապը սկսեց ճաշի պատ-
րաստութիւն տեսնել: Սըդէն մթնել էր:
Սեղանը պատրաստ էր. ինչեր ասես, ինչ
քաղցր կերակուրներ ասես, որ գրած
չէին նրա վրայ: Վիշապի հետ երեք եղ-
բայրներն էլ նստեցին ճաշելու: Վիշապը
չէր մոռացել և, գինին առատութեամբ
բերել. այդ էլ այն նպատակով, որ նրանց
աբբեյնէր և հեշտութեամբ անուշ անէր:
Որովհ՛ տե տղաները սոված էին, ուստի

մեծ ախորժակով սկսեցին ուտել և գինին
կոնծել: Օսէփը հասկացել էր վիշապի
միտքը և ձեռքերի շարժումներով կամե-
նում էր հասկացնել եղբայրներին, որ
նրանք գինի քիչ խմեն, բայց նրանք ար-
դէն կորցրել էին իրանց և ուշադրութիւն
չէին դարձնում Օսէփին, իսկ Օսէփը վեր-
ցնում էր գինու բաժակը, մի քանի խօսք
էր ասում և բաժակը բերնին մօտեցնելով
իրք թէ խմում է, ճարպիկութեամբ գե-
տին էր թափում: Մի քանի ժամանակից
յետոյ եղբայրները բոլորովին թուլացան և
խնդրեցին որ իրանց համար քննելու տեղ
պատրաստէ վիշապը: Օսէփն էլ, թէւ
բոլորովին ուշքի, նոյնպէս ցանկութիւն
յալտնեց քննելու, որովհետև վախենում
էր, որ հակառակ դէպքում վիշապն
իմանար իր խորամանկութիւնը: Վիշապն
էլ հէնց այդ էր ուզում: Նա իր ամենալաւ
և ամենափափուկ շորերը գցեց և երեքն
էլ միասին պառկեցին քննելու: Պառկեց
և վիշապը: Մի քանի բոպէից յետոյ բացի

Օսէփից միւս երկու եղբայրներն արդէն
անուշ քնով խոմփացնում էին: Վիշապը
շատ ուրախացաւ և որպէսզի հաստատ տե-
ղեկանալ թէ արդեօք բոլորն են քնել թէ
ոչ, ձայն տւեց:

— Տղերք, ձեզանից ով քնած, ով
զարթուն:

— Ե՞ս, պատասխանեց Օսէփը:

— Ինչու, բարեկամս, միթէ տեղդ
վատէ, կամ գուցէ էլի ախորժակ ունիս
ուտելու և խմելու. եթէ այդպէս է, ևս
իսկոյն կպատրաստեմ այն, ինչ որ գու
ես ցանկանում:

Օսէփն որպէսզի ցոլց տալ, որ իրանք
էլ պակաս չեն վիշապից, ասաց.

— Դէհ, իհարկէ ուտել և խմել եմ
ցանկանում. եթէ մարս լինէր այստեղ,
հիմա միակ ինձ համար ձւաձեղ էր արել
և մի գառ մորթել. թէ չէ այդ ինչ ճաշ
էր, գեռ փորիս մի մասը դատարկ է:

Վիշապը զարմացաւ որ մի հասա-
րակ մարդ այնքան ուտել է ցանկանում

և վախեցաւ չլինի թէ իրանից ուժով
լինին այդ մարդիկը: Ինչ և իցէ. նա վեր
կացաւ և խսկոյն մի գառ մորթելով ամեն
ինչ պատրաստեց: Նորից սեղանի նստան
կերան, և խմեցին և էլի սլառկեցին: Իհար-
կէ այս անդամ ևս Օսէփը զինին թա-
փել էր:

Վիշապը այս անդամ բոլորովին հա-
մոզւած լինելով, որ Օսէփը ևս քնած
կ'լինի, ձայն տւեց.

— Հը, Օսէփ եղբայր, քնել ես թէ
էլի ուրիշ փորացաւ ունիս.

— Եհ, վիշապ եղբայր, դու խսկի
հիւրերիդ պատիւ տալ չես իմանում. այս
քան կերել—խմել ենք, բայց զոնէ մի
քիչ ջուր չըերեցիր որ խմէինք: Եթէ
մարս լինէր, շոտարարը*): Վերցրել և գնացել
էր հեռու անտառներից ջուր բերել. Եթէ
նա ուզում է մեզ լաւ պատիւ տալ ջուրը
այդպիսի հեռու տեղերից է բերում:

*.) Շատարարը մազի տեսակն է, միայն նա ցո-
րենի, դարս համար է և նրա ծակելը մեծ—մեծ էն:

— Միթէ այդ մի դժւար բան է, ես
այս ըսպէիս քո ցանկացած ջուրը կ'բերեմ:
Բնակարանիցս հեռու, շատ հեռու, ան-
տառի խորքում մի աղբիւր կայ, դու մի
քիչ սպասիր, ես այս ըսպէիս կ'գնամ և
կ'բերեմ: Վիշապը ասաց—չասաց վերցրեց
շատարարը, դիմեց գէպի աղբիւրը, առանց
մտածելու որ շատարարը ծակծկոտէ և
ջուրը նրա մէջ չէր կարող մնալ:
Վիշապի հեռանալուց յետոյ Օսէփը սկսեց
զարթեցնել էր եղբայրներին, բայց նրանք
գինու ազգեցութեան տակ այնպէս էին
քնել, որ ոչ մի կերպով չ'կարողացաւ
զարթեցնել նրանց: Այսուհետեւ նա սկս-
եց գիտել վիշապի բնակարանը: Տան մի
կողմում կապած էին հրաշալի ձիաներ,
միւս կողմում թռչուններ, իսկ մի կողմում
փորած էր ոսկու հորը: Երբ Օսէփը ոսկին
տեսաւ, խելքը թռաւ: Խսկոյն մի պարկ
ճարեց և ոսկիներով լցնելով՝ շալակեց
դուրս եկաւ վիշապի տնից և բաւականին
հեռանալով մի ծառի տակ թափեց և

նորից յետ դարձաւ ու անկողին մտաւ,
որպէսզի վիշապին կասկածի տակ չգցէ:
Շուտով դարձաւ վիշապը դատարկ շատա-
րարը ձեռքին և ներս մտնելով ասաց.

— Օսէփ եղբայր, այս ի՞նչ խազ է,
որ դու ես խաղում հետս, միթէ շատա-
րարում ջուր կմնալ, ախր չէ որ նա ծակ-
ծկոտ է. քո մալրը կամ գիտ է եղել, կամ
թէ չէ բնչալէս հասկանալ:

Օսէփը իբր թէ գարմանալով ասաց,
«Մալրս իսկի էլ գիտ չէ եղել. միայն բանը
նբանումն է, որ դու փոխանակ խախալի,
շատարարն ես վերցրել. միթէ դու չէիր
մտածում, որ շատարարի ծակերը աւելի
մեծ—մեծ են, հետեւալէս և ջուրը նրա
մէջ չէր կարող կանգնել: Ես ոչ թէ շատա-
րարն եմ ասել, այլ, խախալը: Փորձիր
այդ բանը և կ'տեսնես, որ ասածս ճիշտ է:

Վիշապը պատրաստ էր նրան պատառ
— պատառ անելու, որ առաջուց չէր
ասել, որպէսզի նորից այնքան ճանապարհ
չկտրէր, բայց զսպելով իրան, վերցրեց

խախալը և ճանապարհ ընկաւ: Սակայն
այժմ աւելի բարկացաւ, երբ տեսաւ որ
ջուրը խախալումն էլ չի մնում: Նա որքան
ուժումը կար, վազեց գէպի տուն, իսկ
մինչև նրա գալը Օսէփը մի պարկ ոսկի
ևս տարել թափել էր նոյն ծառի տակ և
վերադարձել: Վիշապը խախալը ձեռքին
ներս մտաւ և ահոելի ձայնով գոչեց.

— Ե՛լ, Օսէփ, եթէ հիւրս չ'լինէիր,
ես քեզ այս ըոպէիս կտոր—կտոր կանէի.
դու իգուր տեղը ի՞նչու ես ինձ նեղացնում,
միթէ խախալում ջուր կ'մնայ. Ես...

Ուզեց շարունակել, բայց Օսէփը, որ
ձայնից դողդողում էր, յանկարծ նրան
լնդհատեց և ասաց.

— Ի՞նչալէս թէ խախալ. իհարկէ,
հասկանալի բան է, որ խախալում ջուր չի
մնալ, և վերջապէս ո՞վ է ասել, որ խա-
խալը տանես, չէ որ նրանից փոքրը կայ.
Ես ինչ անեմ որ դու անհասկացող ես և
մաղի տեղ խախալը տանելով եկել սպառ-
նում ես ինձ. նախ ես քեզանից չեմ վախե-

նում, երկրորդ ես ճիշտն եմ ասում, դու
հակառակն ես հասկանում: Այժմ էլ վեր-
ցըւ մաղը. եթէ այս անգամ էլ ջուր
չմնայ մէջը, այն ժամանակ արի և ինչ
ուզում ես արա, կուզես կ'մենամարտենք
և ով կըյաղթէ հակառկորդին, իր կերա-
կուրը դարձնէ: Իհարկէ, առաջինը, ես
ուզում եմ, որ ինչպէս սկսել ենք այնպէս
էլ վերջացնենք: Եթէ մարտս լինէր, հիմա
մաղով ջուր էր բերել և ես արդէն քնել
էի ու այսքան խօսակցութեան պատճառ-
չէ դարձել. եթէ ես ջուրը խմած լինէի,
հիմայ եղբայրներիս նման անուշ խոմ-
փացնելիս կլինէի: Վիշապը այդ խօսքերի
վրայ մի քիչ հանդարդւեց և մտածեց
վերջին փորձը ևս անել և եթէ այդ ան-
գամ էլ չի յաջողւել, այն ժամանակ իր
ուզածը կանէր. ուստի մըթմըթալով վեր-
ցըւ մաղը և դուրս պրծաւ տնից: Օսէփը
հէնց այդ էր սպասում: Իսկոյն մտաւ
ոսկուհորը, մի պարկ ոսկի ես հանեց, եկաւ
զարթեցըւ եղբայրնելն, պատմեց նրանց

ամեն ինչ և երեքով ճանապարհ ընկան: ·
Իսկ վիշապը տեսնելով որ այդ անգամ էլ
փորձը անաջող անցաւ, կատաղեց, ջարդեց
մաղը և վագեց գէպի տուն, որ խաբեբայ
մարդու մեծ պատառը ականջը թողնի բայց
որքան զարմացաւ, երբ ներս մտնելով
տեսաւ որ տանը ոչ ոք չ'կար: Նա դէս
ու դէն ընկաւ, վիշիրեց քունչ ու պաւճախը,
բայց ոչինչ չ'գտաւ: Սակայն նրա կատա-
ղութիւնը աւելի բորբոքւեց, երբ տեսաւ,
որ ոսկու հորը բաւականին դատարկւել է:
Նա իսկոյն հասկացաւ, որ Օսէփը իրան
խաբելիս է եղել, որպէսզի այդպիսով
ժամանակ վաստակէ և իր եղբայրներին
զարթեցնելով փախչէ: Վիշապը աղօթում,
խնդրում էր, որ Օսէփը իր ճանկն ընկնէր,
բայց որտեղից, արդէն ամեն ինչ վերջա-
ցած էր: Նա այնքան այս ու այն կողմն
ընկաւ, որ բոլորովին յոգնեց, նստեց մի
գերանի վրայ և քաղցը ննջեց: Իսկ մեր
ճանապարհորդները ոսկիները շալակած
գնում էին: Օսէփը ճան սպարհին կ'սմեցաւ

իր դանակով մի ճիպոտ կտըել, բայց տեսաւ
որ վիշապի տանն է թողել: Նա այդ մասին
յայտնեց Եղբայրներին և ասաց, որ ինքը
պէտք է գնայ և յետ բերի դանակը:
Եղբայրները խնդրեցին, աղաչեցին, որ նա
իզուր տեղը չ'գնայ և վիշապին զոհ
դառնայ այն էլ մի բուժ դանակի համար,
բայց նա չ'լսեց նրանց և յետ դարձաւ
դէպի վիշապի տունը: Կամաց—կամաց
բարձրացաւ կտուրը և նայելով տեսաւ, որ
վիշապը նստել և ննջում էր. անզգու-
շութիւնից Օսէփը մի քար գցեց. վիշապը
կարծելով որ քար գցողը մուկ է, բար-
կացաւ, կրծտացրեց ատամները, վերցրեց
բահը և դուրս վագեց, որպէսզի կտուրը
քանդէ և իր վրէժը փոքրիկ մկնից հանէ:
Բայց հէնց որ կտուրը բարձրացաւ միւս
կողմից Օսէփը մտաւ ներս, վերցրեց դա-
նակը և կամենում էր դուրս փախչել,
սակայն վիշապը նկատեց, վրայ հասաւ,
բոնեց և կամեցաւ ջարդ ու փշուր անել
նրան, բայց ալնքան էր բարկացած, որ

չուզեց մի անգամից սպանել, այլ կամեցաւ
Երկար տանջել, ուստի դցեց մի ջւալի մէջ,
կախեց հերթկից և մի ճիպոտ վերցնելով
սկսեց սաստիկ հարւածել նրան: Հար-
ւածները այնքան սաստիկ էին որ Օսէփը
սկսեց գանազան ողբալի ձայներ հանել:
Վիշապը լսելով նբա ձայնը, զարմացաւ
կարծելով թէ նա երգում է և հարցրեց.
«Օսէփ եղբայր, այդպէս լսու է. ինչպէս
երեւում է քեզ ծեծը շատ է դուք դալիս,
որ այդպէս երգում ես»: Օսէփը իրան
զսպեց, երբ վիշապը խօսեց, որպէսզի ցոյց
տար որ ճիշտ են վիշապի տսածները և
ապա սասաց. իհարկէ, շատ լսու է, ալլապէս
ինչու պէտք է ալսալիս երգեմ. միթէ
այդպիսի ճիպոտներով կարող ես ինձ ցաւ
պատճառել. մայրս երբ ուզում էր մեզ
պատժել, իսկոյն վազում էր անտառ, թարմ
հունի ճիպոտներ էր կտրատում և նրանցով
մեզ ծեծում. այ, հասկանալի է, որ նրանք
ճիպոտները ուղղակի մարդու քէփն են



բերում:

— Լաւ, խաբեբայ, ասաց վիշտապը, այդ էլ կ'փորձեմ. միւնոյն է, այժմ էլ չես կարող ձեռքիցս ազատւել, դու արդէն փակւած ես ջւալում և երդկից կախւած: Ես ահա գնում եմ. իսկ եթէ այս դէպ-քում էլ երեալ քո խաբէութիւնը, 0, այն ժամանակ մի հարւածով պէտքէ կեանքիդ վերջ գնեմ. ասաց վիշտապը և դուրս թռաւ ճիպոտ բերելու:

Օսէփը տեսնելով որ վիշտապը արդէն հեռացաւ, հանեց դանակը, պատուեց ջւալը և թրոմփի, ընկաւ գետնին: Թիւ նրա մէջքը բաւականին ցաւեց, բայց կեանքը քաղցը էր, նա մի կերպով վերկացաւ, բըռ-նեց վիշտապի փոքրիկ ձագը, որ կենդանիների շարքումն էր, դրեց ջւալում, կարեց պատռած տեղը, կախեց երդկից և փախաւ դէսկի իր եղբայրները: Այդ ըոպէին ներս մտաւ վիշտապը թարմ ճիպոտները ձեռքին և սկսեց հարւածել: Վիշտապի ձագը սկսեց ձայներ հանել և ասում էր.

— 0, մայրիկ, այդ ես եմ, քո ձագուկն եմ, մի ծեծիր. ախը ես քեզ ի՞նչ եմ արել. վայ մայրիկ, կողքս կոտրեցիր, ազատիր ինձ:

Խոկ վիշտապը կարծելով թէ նա Օսէփն է և կեղծում է, ասաց. «Էհ, Օսէփ, ալես չես խաբիլ ինձ, վերջին ասածդ ձիշտ դուրս եկաւ. այժմ տեսնում եմ, որ երգելու տեղ խնդրում և պաղատում ես. բայց իգուր: Ահա ժամանակ եմ տալիս, դէհ սկսիր երգել. ասաց և սկսեց էլի զարկել: Խեղճ ձագուկը էլի խնդրեց, էլի պաղատեց, բայց չար վիշտապը չլսեց նրան, մինչեւ որ ձագուկի ձայնը կտրւեց և ստակեց: Վիշտապը այնուհետև կամեցաւ ջւալի բերանը բանալ և իր սոված փորը կշացնել, բայց յանկարծ արիւնը գլուխը տւեց, երբ իսկապէս տեսաւ իր սառած ձտգին: Նա կատաղութեամբ այնպէս գոռաց, որ ամբողջ աշխարհը դղրդաց. սկսեց բարձր ձայնով լաց լինել, վազվակել, այս այն կողմն ընկնել, բայց էլ ո՞ւր,

Օսէֆը իր բանը տեսել և անհետացել էր։
Վիշապի բոլոր ջանքերը՝ նրան գտնելու
իզուր անցաւ։ Այդ օրից սկսած նա
խեղճացաւ և իր ձագուկի համար սուր էր
պահում։

Օսէֆը միանալով իր եղբայրներին,
շարունակեցին իրանց ճանապարհը և դէ-
պի իրանց տունը տանող ճանապարհից
շեղւելով, դուրս եկան այդ երկրի թա-
գաւորանիստ քաղաքը։ Թագաւորին յայ-
տնեցին, որ երեք եղբայր ահագին հարս-
տութեամբ քաղաք են մտել։ Թագաւորը
շատ վախեցաւ և նրանցից մէկին կանչեց
իր մօտ և ասաց. « Ես ձեզ ազտո կ'թող-
նեմ, եթէ այստեղից մօտիկ անտառում
ապրող վիշապի թոչուններից մէկը բերէք
ինձ համար»։ Այդ այն միենոյն վիշապն
էր որից հազիւ հազ էին ազատւել։ Մեծ և
միջնակ եղբայրները հրաժարւեցին։ Թա-
գաւորը կանչեց ամենափոքրին և միենոյնը
նրան առաջարկից։ Օսէֆը քիչ մտածելուց
յետով համաձայնեց և եկած ճանապարհով

դարձաւ ու հասաւ վիշապի բնակարանին։
Այժմ այլ ևս կտուրը չբարձրացաւ, այլ
զգուշութեամբ մտաւ թոշնանոցը և մի
բազէ բռնեց ու կամենում էր գուրս գալ,
բայց որովհետեւ բազէն սովորեցրած էր,
ուստի սկսեց գանազան ձայներ հանել, որ
այդպիսով իմաց տայ տիրոջ։ Օսէֆը նրա
միտքն իմանալով, իսկոյն ձիաների ախո-
ռում թաք կացաւ։ Վիշապը որ դեռ սգի
մէջ էր, ներս մտաւ և տեսնելով որ ոչոք
չկայ, բազէին մին լաւ ծեծեց, որ նա
իզուր տեղը ձայն էր տուել, և դուրս եկաւ։
Օսէֆն այժմ հաւատացած լինելով, որ
բազէն խռոված լինելով այլեւ ձայն չկ
հանիլ, եթէ նրան բռնի, դուրս եկաւ
թաքկացած տեղից և մօտենալով բռնեց
նրան։ Եւ լիբաւի այժմ բազէն ոչ մի
ձայն չհանեց, իսկ Օսէֆը վերցնելով նրան
ուրախ—ուրախ գնաց, հասաւ քաղաք և
մարդիկ ուղարկեց թագաւորին առելու,
«Թագաւորը ապրած կենայ, ես կատարել
եմ ձեր պահանջը»։ Թագաւորը շատ զար-

մացաւ, որ Օսէփը կենդանի տուն էր
դարձել, որովհետեւ նա շատերին էր այդ-
պիսի փորձերով վիշտապին զոհ դարձել:
Երբ Օսէփը ներկայացաւ թագաւորին,
նա գովեց նրա քաջութիւնը և ասաց, որ
այս անգամ էլ թող նրա ձիաներից մէկը
բերի: Օսէփը համաձայնւեց. գնաց հա-
մարեանոյն եղանակով ձին հանեց, նստեց
վրան և կանչեց. «Ա.իշապ եղբայր, դուքս
արի, ես Օսէփին եմ, քո ձագը կողցնողը
և ահա տանում եմ քո ձին». Վ.իշապը
երբ որ Օսէփի ձայնը լսեց, իսկոյն դուքս
սլրծաւ և տեսաւ որ նա ձիու վրայ նս-
տած, սլանում է: Վ.իշապը շատ ծնկները
ծեծեց, բարկացաւ իր վրայ, որ իզուր
տեղը բարկացը էր իր խելօք կենդա-
նուն և սկսեց բարձր ձայնով կանչել.
«Օսէփ, Օսէփ, գոնէ կանգնիր համբուրեմ
ձիու ճակատը, էլի թող քեզ լինի, ես
ազնիւ խօսք եմ տալիս, որ քեզ ձեռք
չեմ տալ. դու ինձ զբկեցիր բոլորից, գոնէ
կատ որիր վերջին խնդիրս, թող գամ և

համբուրեմ նրա ճակատը»: Բայց Օսէփը
չ'հաւատաց նրա խօսքերին, քշեց ձին և
հասաւ թագաւորանիստ քաղաքը: Թագա-
ւորը և պալատականները զայրացան և միւ-
նոյն ժամանակ մտածեցին վերջին փորձն
ևս անել: Թագաւորը կանչեց երեք եղ-
բայլներին էլ և ասաց. «Ես երկու բան
առաջարկեցի, դուք երկուսն էլ կատարե-
ցիք այժմ վերջինն եմ առաջարկում, եթէ
այդ էլ կատարեցիք, իմացէք որ ես ձեզ
ազատ կ'թողնեմ և ինձ մօտ կ'պահեմ:
Դուք պէտք է բերեք և վիշտապին—ահա
վերջին ցանկութիւնս»:

Մեծ և միջնակ եղբայրները սարսա-
փեցան, իսկ Օսէփը մի քիչ մտածելուց
յետոյ յայտնեց, որ ինքը կարողէ և վիշտ-
ապին բերել: Նրա եղբայրները որքան
խնդրեցին, որ Օսէփն այդպիսի յանդուգն
քայլ չանի, սակայն նա չլսեց նրանց և
թագաւորից խնդրեց մի կացին, մի ուրագ,
մի քանի մեխ և ստանալով բոլորը, կեր-
պարանափոխւեց, երեսին ներկ քսեց,

շորերը փոխեց և գնաց վիշապի մօտ:
Հասնելով վիշապի տանը, նա սկսեց բակի
ահագին ծառը կտրել. երբ ծառը ճռճր-
ռալով գետնին գլորւեց, այն ժամանակ
վիշապը դուրս թռաւ տնից և տեսաւ,
որ իրան բոլորովին մի անծանօթ մտրդ
կացինը ձեռքին կանգնելէ, իսկ ծառը
ճղակոտոր ընկած է գետնին: Նա կամեցաւ
լարձակել և մի անգամից կուլ տալ նրան,
բայց կամեցաւ կտրելու պատճառն իմանալ
ուստի հարցըց.

— Ա' տղայ, ինչու ես կտրել այս ծառը.
Օսէֆը դողդողալով պատասխանեց.


— Գիդէք, վիշապ եղբայր, ես մի
եղբայր ունեի, այս քանի օրերս մեռաւ,
նրա համար դագաղ է հարկաւոր, ես շատ
ման եկալ, բայց ոչ մի լարմար ծառ
չ'գտալ. լանկարծ տեսայ այս ծառը և
սկսեցի կտրել: Ես մտածում էի, որ եթէ
տէրը երեալ, նրան կ'խնդրեմ, կաղաչեմ,
որպէսզի նա ինձ ներէ, և ես եթէ կտրել
եմ, բոլորովին հաւատացած եմ եղել, որ


անպատճառ կներւի ինձ: Եհ, վիշապ
եղբայր, այնպիսի մի գեղեցիկ եղբայր
ունէի, որ բոլորովին ձեզ նման էր: Նոյն
իսկ եթէ այնքան բարի գտնւէք որ նե-
րէք, այն ժամանակ նրա տագաղը ուղ-
ղակի ձեր մարմնի համեմատութեամբ
պէտք է շինեմ, որովհետև նա բոլորովին
ձեր հասակին էր: Այժմ դուք էք իմանում,
ահա ես ձեր առաջն եմ, արտասուտքը
աչքերիս, ուզում էք ներեցէք ուզում էք
սպատառ—պատառ արէք: Վերջին խօս-
քերի ժամանակ նա սկսեց կեղծ կերպով
լալ: Վիշապի սիրտը շարժւեց: Զէ որ նրա
էլ որդին էր մեռել: Նա լայտնեց որ նե-
րում է և միւնոյն ժամանակ հտմածայ-
նութիւն տւեց դագաղը իրան վրայ շի-
նելու: Օսէֆը շնորհակալութիւն լայտնեց
և գործի սկսեց: Քիչ ժամանակից լետոյ
խնդրեց վիշապից, որ մանէ դագաղի մէջ,
որ տեսնէ ինչպէս է: Վիշապը մտաւ և
ասաց, որ մի քիչ էլ պէտք է խորացնել:
Խորացնելուց լետոյ նորից մտաւ և ասաց,

որ փակիչը դնէ, տեսնելու թէ ի՞նչպէս
է: Օսէֆը հէնց զբան էր սպասում. նա
ուրախութեամբ փակիչը դրեց, զբան
պինտ նստեց, մի քանի մեխ զարկեց և
այդպիսով վիշտապին բանտարկեց: Այնու-
հետեւ յալտնեց որ ինքը Օսէֆն է: Վիշտապը
փրփրեց, կատաղեց, բայց ամեն ինչ արդէն
վերջացած էր: Վիշտապի տան մօտով մի
գետ էր հոսում. Օսէֆը նրան շրջելով
տարաւ գցեց գետը, ինքն էլ զբան նստե-
լով գետի հոսանքով հասաւ թագաւորի
պալատին: Թագաւորն այս անդամ մնաց
շւարձած: Նա էլ չիմացաւ ինչ անէր,
միայն յալտնեց որ վիշտապին պէտք է բաց
թողնէ, եթէ Օսէֆը նրանից կարողացաւ
տղատւել, հօ այն է կազատւի, իսկ եթէ
ոչ՝ ուրեմն ոչ: Օսէֆը այն ժամանակ
ասաց, ինքը կ'գնայ հեռու մի սարի վրայ
կ'կանգնի, իսկ թագաւորը թող վիշտապին
բաց թողնէ և իրան ցոյց տայ: Թագաւորը
համաձայնւեց: Օսէֆը իսկոյն գնաց հա-
սաւ սարին, հանեց շորերը և մի փայտի

վրայ հագցնելով տնկեց սարի գլխին, իսկ
ինքը թաքեցաւ: Թագաւորը երբ Օսէֆին
նկատեց սարի գլխին, իսկոյն վիշտապին
բաց թողնէ և Օսէֆին ցոյց տռեց: Վիշտապը
կայծակի արագութեամբ վագեց դէպի
Օսէֆը և հասնելով տնկած վայտին՝ ճան-
կեց նրան և այնպէս ուժգին տէպի ներքեւ
դրուց, որ ինքն էլ հետը ներքեւ թաւալ-
ւեց, նրա մեծ պատառը տկանց մնաց:
Օսէֆն արագութեամբ գնաց հագաւ շո-
րերը և վիշտապի մորթը մաշկելով ուսերին
գցեց ու գնաց ներկայացաւ թագաւորին: /
Թագաւորը տեսնելով նրա քաջագործու-
թիւնը, այլևս վախեցաւ նրա հետ խա-
ղեր խաղալ, և այնուհետեւ նրանց ուկի-
ները մի ջորու բարձեց, իրանից էլ բաւա-
կանին ուկի դրաւ և մի քոնի պալատա-
կանների հետ իրանց հսլընիքը ուղար-
կեց: Բացի դրանից թագաւորը Օսէֆին
իր երկրի իշխան նշանակեց: Նրա ծնող-
ները, որոնք արդէն ողբում էին իրանց
որդիների կորուստը, շատ ուրախացան

նրանց կենդանի տեսնելով։ Եւ ահա այդ-
պիսով նրանք Օսէփի շնորհիւ այնքան
հարստութիւն տիզեցին և իշխանների
շարքն ընկան։





2013

12696

ՀՀ Ազգային գրադարան



NL1641350

